Արձանագրության 3

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/28» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09.10.2017թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Հարությունյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Ամիրյան /գնահատող/, Ս. Յահյան /գնահատող/ Ա. Երմազյան /բացող/, Լ. Մարության /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Հարությունյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Բաց մրցույթի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Հարությունյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բաց մրցույթի ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/28» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Հարությունյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/28» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ ընտրված մասնակից հայտարարել «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Հարությունյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ–ին,

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Հարությունյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Հարությունյան

Անդամներ՝ ---------- Ա. Ամիրյան

---------- Ս. Յահյան

---------- Ա. Երմազյան

---------- Լ. Մարության

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան